



ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ  
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

---

---

2014 թվականի գործունեության  
տարեկան  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ  
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ մԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2014 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից իրականացված աշխատանքների հիմնական նպատակն եղել է ԼՂՀ կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և ԼՂՀ կառավարության ռազմավարական նշանակության ծրագրերով նախատեսված ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտների գծով գերակա խնդիրների կատարման ապահովումը:

Վարչության համակարգում կատարված աշխատանքներն, ըստ առանձին ծրագրերի և ոլորտների բնութագրվում են հետևյալ հիմնական ցուցանիշներով.

**Օրենսդրություն**

2014 թվականին օրենսդրական դաշտի բարելավման, զարգացման համար համապատասխան նորմատիվ-իրավական դաշտը կանոնակարգելու նպատակով ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից մշակվել են մի շարք իրավական ակտեր՝

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որով կարգավորվել է հասարակական հարաբերությունները մթնոլորտի վրա վնասակար ներգործություն ունեցող իրավաբանական եւ ֆիզիկական անձանց ու պետական եւ տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների միջև՝ մթնոլորտի պահպանության կառավարման բնագավառում, հստակեցվել են օրենքի կարգավորման առարկան և օրենքում օգտագործվող հասկացությունները:
- 2014 թվականին մշակվել և հաստատվել են ԼՂՀ կառավարության 43 որոշում, 12 գերատեսչական ակտ:

**ԼՂՀ ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2014 թվականի ծրագիր.**

ԼՂՀ ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2014 թվականի ծրագրի շրջանակներում ԼՂՀ լեռնահանքային պոտենցիալի բարձրացման և ռացիոնալ յուրացմանն օժանդակելու նպատակով 2014 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- 1) երկրաբանական հիմքի վրա մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների 1:200 000 մասշտաբի քարտեզների կազմում,
- 2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում մետաղական օգտակար հանածոների և լիցենզիոն տարածքների 1:200 000 մասշտաբի երկրաբանական քարտեզների կազմում,
- 3) Լիսագորի պղինձի և Մերդարաքսյան սպիտակ քարերի երկրաբանական հետազոտություններ,

4) Շալուա-Բերձոր հանքային հանգույցի տարածքում իրականացվել են երկրաքիմիական որոնողական աշխատանքներ,

5) Խաչենի պղինձ-պորֆիրային հանքերնական տարածքում իրականացվել են հորատման աշխատանքներ՝ 3 հորատանցք 301 մետր և 308.5 մետր խորությամբ, ընտրվել է մոտ 300 փորձանմուշ, 73 ակոսային նմուշ,

6) Վազգենաշեն-Վաղազին տեղամասում 1:50 000 մասշտաբի լիթոքիմիական քարտեզի կազմում:

#### **ԼՂՀ պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումներ 2014 թվականի ծրագիր.**

Անտառների պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրմանը և անտառօգտագործմանն ուղղված մի շարք միջոցառումներ են իրականացվել, մասնավորապես բնական աճի աջակցման, բնական աճի ուսումնասիրության, անտառային ճանապարհների կառուցապատման ու վերանորոգման և բնափայտի մթերման տարեկան չափաքանակի ապահովման ուղղությամբ:

Բնափայտի բնական աճի աջակցմանն ուղղված ծրագրով իրականացվել է 100 հեկտար տարածքի փխրեցում:

Պետական անտառային ֆոնդի ոչ անտառածածկ հատվածներում կատարվել է 1,2 հեկտար տարածքի վրա անտառատունկ:

4 անգամ իրականացվել են 2013 թվականի ընթացքում հիմնված 15 հեկտար անտառկուլտուրայի անհրաժեշտ խնամքի աշխատանքներ:

2200 հեկտար անտառային տարածքում իրականացվել է անտառային ուսումնասիրություններ և նշանակվել են հատումներ 521 հեկտար տարածքի վրա և մթերվել է 5 800 մ<sup>3</sup> գործափայտ և 24 500 դարսված մ<sup>3</sup> վառելափայտ:

#### **ԼՂՀ բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2014 թվականի ծրագիր.**

ԼՂՀ բնության հուշարձանների անձնագրերի կազմման միջոցառումների 2014 թվականի ծրագրի շրջանակներում և ԼՂՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053 որոշմամբ հաստատված 91 գիտական, բնապատմական և գեղագիտական արժեք ներկայացվող բնության հուշարձաններից իրականացվել են 7 բնության հուշարձանների տարածքների չափագրման, հստակեցման, քարտեզագրման աշխատանքներ:

#### **ԼՂՀ-ում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2014 թվականի ծրագիր.**

ԼՂՀ-ում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2014 թվականի ծրագրի իրականացվել են գիշատիչների գլխաքանակի կարգավորման, կենսատեխնիկական միջոցառումներ: 2014 թվականին որսված 40 գայլերի և 132 շնագայլերի դիմաց սահմանված կարգով որսորդներին տրամադրվել են խրախուսումներ:

#### **Ընդերքօգտագործում**

Հաշվետու ժամանակաշրջանում լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվել են ներկայացված հանքարդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության

լիցենզիա ստանալու 7 հայտ, որի արդյունքում տրամադրվել է 5 ընդերքօգտագործման թույլտվություն, որից՝

- 1 հանքարդյունահանման,
- 4 երկրաբանական ուսումնասիրության,

2 հայտ ուսումնասիրվում է:

Դադարեցվել են 9 ընդերքօգտագործման թույլտվություն:

ԼՂՀ Ընդերքի մասին նոր օրենսգրքի պահանջների համաձայն 2014 թվականի ընթացքում 58 օգտակար հանածոյի հանքաարդյունահանման և 15 երկրաբանական ուսումնասիրության լիցենզիաները վերաձևակերպվել են համապատասխանաբար օգտակար հանածոյի արդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունների:

Վարչության կողմից ընդերքի օգտագործման համար գանձված պետական տուրքերը և տույժերը 2014 թվականին ԼՂՀ պետական բյուջե է մուտքագրվել 35393000 դրամ պետական տուրք:

### **Բնապահպանական փորձաքննություն**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումները քննարկելուց և ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունը ստուգելուց հետո կնքվել են պայմանագրեր, և օրենքով սահմանված կարգով իրականացվել են համապատասխան փորձաքննություններ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացվել նախատեսվող գործունեությունների 49 հայտ, որոնց էլ տրվել է դրական եզրակացություն:

2014 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2013 թվականին կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	2014 թվական		2013 թվական	
		Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը	Գումարը (հազ. դրամ)	Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը	Գումարը (հազ. դրամ)
1	Բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ	49	3985.5	58	6065.6
2	Կնքվել է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ	49	3985.5	58	6065.6
Ընդամենը		x	3985.5	x	6065.6

**Ծառահատումների թույլտվություններ**

Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ շրջվարչակազմերի, գյուղական համայնքների, տարբեր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից ծառահատում և ծառերի երիտասարդացում իրականացնելու նպատակներով ներկայացված 52 դիմումների հիման վրա տեղում կատարվել են դրանց կենսական վիճակների ուսումնասիրություններ և համապատասխան քննարկումների արդյունքում տրամադրվել՝ 39 թույլտվություն: 4 դիմում մերժվել է, ծառահատումների պայմանները իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով, 2-ը վերադարձվել է փաստաթղթերը համալրելու նպատակով:

2014 թվականին ծառահատման և ծառերի երիտասարդացման թույլտվությունների քանակը պակասել է 23-ով:

**Որսի թույլտվություններ**

Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում՝ որսորդներին և ձկնորսներին, համապատասխան փաստաթղթերի արժանահավատությունը ստուգելուց և ընդունելուց հետո, տրամադրվել են 217 թույլտվություններ, այդ թվում՝ 205-ը սիրողական որսի, իսկ 12-ը թառփով ձկնորսություն իրականացնելու համար:

Տրամադրված թույլտվությունների դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 1080700 դրամ:

Այս ոլորտի աշխատանքները կատարվել են տարվա որսաշրջանի ընթացքում և վերահսկվել են:

2014 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2013 թվականի ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	2013 թվական		2014 թվական	
		Քանակը	Գումարը (հազ. դրամ)	Քանակը	Գումարը (հազ. դրամ)
1	Կենդանատեսակների որսի թույլտվություններ	424 հատ	303.70	1026 հատ	963.7
2	Ցանցով ձկնորսություն իրականացնելու թույլտվություններ	-	-	-	-
3	Թառփով ձկնորսություն իրականացնելու թույլտվություններ	450 կգ	13.5	3900 կգ	117.0
Ընդամենը՝ մուտքագրվել է պետբյուջե		x	317.2	x	1080.7

**Ջրային ռեսուրսներ**

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով ներկայացված հայտերի հիման վրա, ԼՂՀ Ջրային օրենսգրքի պահանջներին ջրօգտագործման պայմանների համապատասխանության ստուգման նպատակով, տեղում ուսումնասիրվել է 38 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել

ջրօգտագործման թույլտվություններ: Տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների դիմաց ԼՂՀ պետբյուջե է մուտքագրվել 254 000 դրամ:

2014 թվականին ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման քանակը 2013 թվականի համեմատ ավելացել է, երկարաձգումների քանակը՝ ավելացել է 15-ով, մուտքերը պետական բյուջե 2013 թվականի համեմատ չեն ավելացել:

### **Հողերի կառավարում**

ԼՂՀ շրջանների վարչակազմերի և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, իսկ բնապահպանական փորձաքննություն իրականացնելուց հետո տրամադրվել են գրավոր համաձայնություններ՝ դրանց փոփոխման վերաբերյալ: ԼՂՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի «Հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխման կարգը սահմանելու մասին» N85 որոշման պահանջներին չհամապատասխանող դիմումները մերժվել են:

### **Տեսչական վերահսկողական աշխատանքներ**

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության տարածքում բնապահպանական պետական տեսչության կողմից կատարվել են 40 ստուգայցեր՝ ըստ «Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ, 24-27-րդ հոդվածների պահանջների:

Բնապահպանական պետական տեսչության կողմից ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել են 79 տարբեր տեսակի իրավախախտումներ, որոնց հաշվարկված վնասի չափը կազմել է 40260700 դրամ, իսկ վարչական տուգանքը՝ 630000 դրամ:

### **Կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում՝**

• **Ապօրինի ծառահատման** փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 21 իրավախախտում, որոնք կատարվել են 56 քաղաքացիների կողմից:

1. Կազմված 21 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 17454800 դրամ.

2. Ոստիկանություն է ուղարկվել 14 վարույթ՝ 15195800 դրամի չափով.

• **Ապօրինի անտառահատման** փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 26 իրավախախտում, որոնք կատարվել են 44 քաղաքացիների կողմից:

1. Կազմված 26 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 22468200 դրամ.

2. Ոստիկանություն է ուղարկվել 10 վարույթ՝ 18335200 դրամի չափով.

3. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 66-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 2 քաղաքացի՝ 150000 դրամի չափով, նշված գումարը կամավոր չվճարելու պատճառով՝ վարույթները ուղարկվել են Դատարան գանձելու նպատակով:

• **Ապօրինի որսորդության** փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 6 իրավախախտում, որոնք կատարվել է 9 քաղաքացիների կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 88-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 5 քաղաքացի՝ 280000 դրամի չափով, որից կամավոր մուծվել է պետբյուջե 210000 դրամ, չմուծված 70000 դրամի գանձման վարույթը ընթացքի մեջ է:

2. Կազմված 6 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 95000 դրամ, որից կամավոր մուծվել է պետբյուջե 90000 դրամ, չմուծված 5000 դրամի գանձման վարույթը ընթացքի մեջ է:

• **Ապօրինի ձկնորսության** փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 5 իրավախախտում, որը կատարվել է 5 քաղաքացու կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 89-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 1 քաղաքացի՝ 100000 դրամի չափով, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

**Բնապահպանական պետական փորձաքննության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտներում**

Ջրօգտագործման թույլտվության և բնապահպանական պետական փորձաքննության ճշտության փաստի առթիվ ստուգվել է 13 կազմակերպություն:

Ապօրինի ջրօգտագործման փաստով արձանագրվել է 2 իրավախախտում, որոնք կատարվել են 2 կազմակերպությունների կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 63<sup>2</sup>-րդ հոդվածով մեկ կազմակերպությունը վարչական պատասխանատվության է ենթարկվել 100000 դրամի չափով, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

2. Կազմված 2 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 95 800 դրամ, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

**Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում՝**

Ընդերքօգտագործման թույլտվությունների և պահպանության ոլորտում ստուգվել է 8 կազմակերպություն, իրավախախտումներ չեն հայտնաբերվել:

**Բնապահպանական և բնօգտագործման վճարների ոլորտում**

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ հաշվետվություն են ներկայացրել 107 հիմնարկ-ձեռնարկություն:

**«Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն.**

2014 թվականին «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2014 թվականին շարունակվել են աշխատանքներ ուղղված երկրաբանական ֆոնդի ձևավորմանը և համալրմանը, 2014 թվականին «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպության երկրաբանական փորձարկման լաբորատորիայի կողմից, օգտակար հանածոների որակը գնահատելու նպատակով, շարունակվել են իրականացվել հանքային հումքի հսկողական անալիզներ:

2014 թվականին «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերը կազմել է 125 497 434

դրամ, որը ֆինանսավորվել է պետբյուջեից կազմակերպության հաստիքների քանակը կազմել է 29 հաստիք, ավտոմեքենաների քանակը 7:

**«Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.**

ԼՂՀ կառավարության որոշմամբ 2014 թվականի համար հաստատված 12 500մ<sup>3</sup> գործափայտի և 159580 դարսված մ<sup>3</sup> վառելափայտի մթերման համար անտառօգտագործողներին տրամադրված թույլտվությունների հիման վրա <<Արցախանտառ>> ՊՈԱԿ-ի և անտառօգտագործողների միջև կնքվել են բնափայտի մթերման պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում մթերվել է՝

- 9100 մ<sup>3</sup> գործափայտ
- 106365 դարսված մ<sup>3</sup> վառելափայտ:

2014 թվականին «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերը կազմել է 188287027 դրամ, որը ֆինանսավորվել է պետբյուջեից, կազմակերպության հաստիքների քանակը կազմել է 200 հաստիք, ավտոմեքենաների քանակը 6:

**Վարչատնտեսական գործունեություն և գործավարություն**

**Բյուջետային միջոցների հաշվին համակարգի պահպանման ծախսեր**

(հազ. դրամ)

Տարի	Նախահաշվային պլան	Ֆինանսավորում	Մնացորդ
2013թ.	94508.7	79857.867	14650.833
2014թ.	117348.7	105012.0	12336.7

**Վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշներ**

Տարի	Աշխատողների միջին ցուցակային թիվը	Ավտոմեքենաների քանակը տարեվերջին
2013թ.	44	3
2014թ.	44	4

2014 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ է մուտքագրվել իրավաբանական անձանցից և քաղաքացիներից ստացված 840 գրություն, պետական մարմիններից և նրանց ենթակա կազմակերպություններից ստացված 258 գրություններ:

Ընդհանուր առմամբ 2014 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ է մուտքագրվել է 1098 մտից փաստաթուղթ, ելքագրվել՝ 2047 գրություն: